Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2366 5
331.81
Զ-57
1683

№ Գրադարան «Կեանք»-ի № 4

Ր. ԶԷՅԴԼԻՆ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
S.S.S.R. Публичная Библиотека
7/XI-1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԵՕՐՄԱԼ ԲԱՆՈՒՈՐԱԿԱՆ ՕՐ

Ռուսերէնից թարգ.
Մկրտ. Եսայեան

Գինն է 5 կոպ.

ԹԻՖԼԻՍ
Եղեմտաւաւոր տպարան «ՀԱՅՐԱՆԻՍ» Ընկ. Մադաբեան փող. № 5.
1906 (159)

9-57
3 APR 2013 1683 15 JAN 2010
300
1255-Զէ
1003
11689

Բ. ԶԷՅԴԷԼ

ՆՈՐՄԱԼ ԲԱՆՈՒՈՐԱԿԱՆ ՕՐ

1. ԹԷ Ի՞ՆՉՊԷՍ ՈՒԹԺԱՄԵԱՅ ԲԱՆՈՒՈՐԱԿԱՆ ՕՐԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՀԱՆՋ ԴԱՐՁԱՒ։

1889 թ. Ֆրանսիան հանդիսաւոր կերպով տօնեց իր Մեծ-Յեղափոխութեան հարիւրամեակը։

Սակայն մենակ ֆրանսիական ժողովուրդը չը տօնեց՝ ստրկութիւնից ազատուելու իր յոբելեանը. ամբողջ աշխարհի ազատախոհները տօնեցին նրա հետ ժողովրդների այդ գարունը, որ երբեմն խանդավառութեամբ ողջունել էին Կանտն ու Գեօթէն և նրա հետ միասին գերմանական գրականութեան ու գիտութեան կոթողները։

Համաշխարհային Պարիզ քաղաքում, այդ տօնի առթիւ երկրագնդի բոլոր ժողովրդների աշխատանքի արդիւնքների ցուցահանդէս սարքուեց, որպիսին մինչ այդ չէր տեսել աշխարհը։ Այդ ցուցահանդէսի ժամանակ՝ միջազգային շատ համաժողովներ տեղի ունեցան, —համաժողովներ գործարանատէրերի, վաճառականների, գիւղատնտեսների, բժիշկների, ուսուցիչների և այլն։

Նոյնպէս և հարստութիւններ արտադրողները—բանուորները—յուլիսի 14-ից մինչև 21-ը հաւաքուեցին Պարիզի միջազգային սօցիալիստական համաժողովին, ուր, ի միջի այլոց, քննուում էին միջազգային՝ գործարանական օրէնսդրութեան հարցերը։

Բոլոր քաղաքակիրթ ազգերի կողմից ներկայացած՝ պրօլետարիատի չորս հարիւր ներկայացուցիչներ մասնակցեցին այդ համաժողովին ու հետևեալ վճիռը կայացրին՝

23664
03 APR 2013
15 JAN 2010

Բոլոր երկրների բանուորները 1890 թ. մայիսի 1-ին պետք է միօրեայ ցույց կատարեն, եւ ամենուրեք պահանջ պիտի դնեն կառավարող իշխանութիւններին՝ օրենդրական ճանապարհով բանուորական օրուայ տեւողութիւնը ութ ժամով սահմանափակել։

Ցոյցի ձեւի ընտրութիւնը թողնուեց իւրաքանչիւր երկրի հայեցողութեան։

Մայիսի 1-ը ցոյցի օր նշանակուեց այն պատճառով, որ 1888 թ. ամերիկական բանուորական միութեան Ս. Լուիի համաժողովը արդէն այդ օրը ցոյցի օր էր ընտրել՝ յօգուտ ութժամեայ բանուորական աշխատանքի։

Այսպէս էր Պարիզի 1889 թ. միջազգային սոցիալիստական բանուորական համաժողովի վճիռը։ Այդ որոշման իրագործումը 1890 թուականին, ինչպէս և յաջորդ տարիներում, ալեկոծեց ամբողջ աշխարհը ու իշխող դասակարգերին երկիւղ պատճառեց. 1890 թուականից սկսած՝ այդ որոշման զօրութեամբ միլիոնաւոր բանուորներ ու բանուորուհիներ ամեն տարի կազմում էին ժողովներ, հանդիսաւոր ցոյցեր, ուշադրութիւն չը դարձնելով սպառնող քաղցի, ոստիկանութեան ու բանտի վրայ։

Ութժամեայ բանուորական օրը դարձաւ ժողովրդական ցանկութիւն, իսկ ժողովրդի կամքին ոչ մի բան երկար չէ կարող դիմադրել։

2. ԲԱՆՈՒՈՐՆԵՐԻՆ ԶՐՊԱՐՏԵԼԸ։ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԴՈՒԼ։

Այդ վճռից երևում է, որ նրա մէջ խօսք չը կայ՝

1. Այսպէս անուանած «կապոյտ երկուշաբթի»-ի (Blauer Montag) մասին, որը կապուած է արբեցողութեան, թղթախաղի և թակումահակի հետ։

2. Ընդհանուր գործադուլի մասին։

3. Տօնի մասին։

Ամբողջ աշխարհի մաքառող բանուոր դասակարգը թշնամի է խայտառակ «կապոյտ երկուշաբթի»-ին, ինչպէս և անկանոն բանուորաժամին, որը ամենուրեք իշխում է այնտեղ, ուր «կապոյտ երկուշաբթին» սովորութիւն է համարւում։

Մաքառող պրոլետարիատի ցանկութիւնը հէնց այն է, որ կանոնաւորէ բանուորական օրուայ տեւողութիւնը։ Ամեն տեղ, ուր հանդէս էր գալիս բանուորական շարժումը, անհետանում էր «կապոյտ երկուշաբթին», սակայն, միևնոյն ժամանակ, կրճատւում էր նաև բթացնող 14—18 ժամեայ բանուորական ժամանակը։

Կաղմակերպուած բանուորների շրջանում «երկուշաբթիութիւն անողների» դասակարգը գրեթէ մեռել է։ Բանուորական շարժման հակառակորդները մինչև անգամ յաճախ յայտարարել են, որ սոցիալ-դեմոկրատները սովորաբար ամենածանրաբարոյ և ամենարնդունակ աշխատաւորներն են հանդիսանում։ Եւ մենք իրաւունք ունենք արդարացի հպարտութեամբ ասել՝ որ սոցիալիստական բանուորական շարժումը բարձրացրել է մասսաների բարոյական մակերևոյթը և մինչև իսկ տիրող դասակարգերին փոխել է դէպի լաւը։

Ուրեմն, ամբողջ աշխարհի մաքառող պրոլետարիատին զրպարտում էին, ինչպէս առաջ էլ յաճախ անում էին, — երբ պնդում էին, իբր թէ նրանք վճռել են, այսպէս ասուած «կապոյտ երկուշաբթիներ» սարքել։

Մենք կամենում ենք ոչնչացնել «կապոյտ երկուշաբթին»։ Այո, բայց մենք կամենում ենք ոչնչացնել նաև դիշերային ու կիրակնօրեայ կործանիչ աշխատանքը, կանանց վատառողջ աշխատանքը, երեխաների սպանիչ աշխատանքը և արժատաման անել ուրիշի աշխատանքի պտուղները վատնողների յաւիտենական «կապոյտ երկուշաբթին»։

Թող կորչէ բաժնետէրերի, երկաթուղային, բանկային ու փողային տուզերի «կապոյտ երկուշաբթին»։ Թող կորչէ ոչ-աշխատանքով վաստակած հասոյթը։

Զրպարտութիւնն ու բթամտութիւնը յետոյ պընդում են, որ միջազգային հաժաժողովը մայիսի 1-ը նշանակել է բանուորական ընդհանուր գործադուլի սկիզբ։

Այդ ճիշտ չէ։

Մենք շատ լաւ գիտենք, որ միջազգային գործադուլը անհնար է հէնց այն պատճառով, որ բոլոր բանուորները կազմակերպուած լինելուց դեռ շատ հեռու են։ Մենք շատ լաւ գիտենք, որ հաժաշխարհային գործադուլը անիրագործելի է այն պատճառով, որ կազմակերպուած բանուորների այդ անհնարութիւն էլ,—անհնար՝ բոլոր բանուորական դասի վերաբերմամբ,—իր տրամադրութեան տակ չունի լի դրամարկղներ, որպէսզի աւելի երկար ժամանակ իրեն պահելու հնարաւորութիւն ունենայ։ Վերջապէս, մենք հաստատ գիտենք, որ համաշխարհային գործադուլը անհեթեթութիւն է, որովհետև, կազմակերպելու և նպատակայարմար մարտման ճանապարհով առաւել հեշտ է այդ նպատակին հասնել։

Բանուոր ժողովրդի տանջանքների դէմ ամենաապահով միջոցը պէտք է համարել ոչ թէ ընդհանուր գործադուլը, այլ ընդհանուր կազմակերպումը։

Սկսած այն վայրկեանից, երբ իւրաքանչիւր երկրի բոլոր բանուորները ըստ ազգութեան կը կազմակերպուեն, և այն վայրկեանից, երբ բոլոր ազգային (նացիոնալ) կազմակերպութիւնները կը ձուլուեն միջազգային մի միութեան մէջ, այդ վայրկեանից ամեն մի գործադուլ աւելորդ կը լինի։

Կազմակերպուած բանուոր դասակարգը օրէնքներ կարող է թելադրել դրամատէրերին. նա կարող է առանց արիւնհեղութեան կերպարանափոխել հասարակութիւնը՝ սոցիալիստական իդեաների համաձայն։

Այդ իսկ պատճառով այսօր հնչում է նրա կոչը՝ «Բանուորներ ու բանուորուհիներ, կազմակերպուեցէք. կազմակերպուելը միայն կարող է ազատել ձեզ։ Ձեր կազմակերպուելը՝ միաժամանակ նշանակում է նաև խաղաղ զարգացում և սոցիալիստական հասարակութեան ստեղծագործումն»։

3. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆՈՒՈՐԱԿԱՆ ՏՕՆ։

Ընդհանուր բանուորական տօնի գաղափարը անմիջապէս հաժաժողովի վճռից չէ բղխում, սակայն նա կարճ միջոցից յետոյ անզուսպ ոյժով երևան է գալիս պրոլետարիատի շարքերում և անփոփոխ ապրում է նրա մէջ մինչև այժմ։

Դա՝ արդար, լաւ և մեծ գաղափար է։

Արդարութիւն է, որ ամբողջ աշխարհի բանուորները ունենան իրենց տօնը, ուր նրանք որոտընդոստ ձայնով պահանջէին իրենց իրաւունքը և իրենց ազատութիւնը։

Ներկայումս քիչ են պրդեօք այնպիսի մարդիկ, որոնք աշխատում են քիչ, բայց և այնպէս՝ ամեն տարի մի քանի ամիս տօն են ունենում։ Եւ միթէ չը կան այնպիսիները, որոնք հասարակաօգուտ աշխատանքով երբէք չեն զբաղուում, և որոնց համար, այնուամենայնիւ, տարին տասն և երկու ամիս տօն է։

Իրաւ, միթէ պարտաւոր է բանուորը շարունակ կուչկանդուած մնալ։ Միթէ հէնց նա մենակ իրաւունք չունի դէթ մի օր տօնել իր սեպհական հայեցողութեամբ։

Ով աշխատում է, միայն նա իրաւունք ունի տօն կատարել։ Դատարկապորտը այդ իրաւունքը չունի, զուարճանողների շրջանից պէտք է վռնդել նրան։ Ու-

քիչ դասակարգերը ունեն իրենց առանձին տօները, և մենք էլ կամենում ենք ունենալ մեր տօնը։

Իսկ բոլոր մարդկանց հաւասարութեան և եղբայրութեան գաղափարը հանդիսանում է արդարութեան ու խաղաղութեան գրաւականը։

Համաշխարհային տօնի գաղափարը լաւ գաղափար է նաև այն պատճառով, որ նա արթնացնում է խաւար մասսաները. նա բանուոր ժողովրդին գիտակից է դարձնում իր նշանակութեան ու ոյժին և ուսուցանում է նրան՝ երկրագնդի բոլոր մարդկանց հաւասարութեան և եղբայրութեան գաղափարը։

Համաշխարհային բանուորական տօնի գաղափարը, վերջապէս, մեծ ու վսեմ գաղափար է։ Խոստովանել, որ միլլիօնաւոր սրտեր բաբախում են միաժամանակ՝ աշխատանքի ազատագրութեան համար, խոստովանել, որ միլլիօնաւոր ձայներ հնչում են միևնոյն ժամին՝ աշխատանքի արդար իրաւունքի համար,—այդ վեհ ու բարձր գաղափար է։

Հրէաների ազատագրութեան առաջին մեծ գործը՝ շաբաթ օրը տօն պահելն էր. պրօլետարների ազատագրութեան առաջին մեծ գործը պիտի լինէր՝ պրօլետարական համաշխարհային շաբաթը (суббота)։ Եկեղեցին իր հաւատացեալներին աղօթքի է հրաւիրում կիրակի առաւօտեան, երբ սիրտն ու միտքը թարմ են ու դիւրըմբռնող. կազմակերպուած բանուորները ևս պէտք է առաւօտեան հրաւիրուեն՝ իրենց տօնը տօնելու։

Համաշխարհային՝ իրենց տօնի առաւօտեան արդէն՝ բանուորները պէտք է հաւաքուեն և բարցրացնեն իրենց թարմ ու հուժկու ձայնը՝ ազատութեան, հաւասարութեան և եղբայրութեան համար, ընդդէմ շահագործութեան, մասարդարութեան ու բռնակալութեան։

4. ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ Ո՞Վ Է ՊԱՀԱՆՋԵԼ ՈՒԹԺԱՄԵԱՅ ԲԱՆՈՒՈՐԱԿԱՆ ՕՐԸ։

Սկսած 1890 թուականից՝ կազմակերպուած բանուորները բարձրաձայն և ստիպողաբար պահանջում էին ութժամեայ բանուորական օր։ Բայց այդ պահանջը ցնորք յատարարուեց և նշանակուեց իբրև ժողովրդի բարօրութեան քայքայումն։ Այսպիսի պահանջ անողները համարուում էին յիմարներ ու չարագործներ։ Սակայն, ստոյգ է, որ այդ պահանջը առաջին անգամ բանուորները չեն դրել, այլ պետական անձինք, մտածողներ, մանկավարժներ, բժիշկներ և գրողներ։

Անգլիական պետական կանցլէր՝ հռչակաւոր գիտնական Թովմաս Մօրուսը 1516 թ. իր «Ուտոպիա» գրքի մէջ գրում է.

«Ուտոպիայի բնակիչները օրուայ ժամանակը բաժանում են 24 հաւասար ժամերի։ Վեց ժամը գործադրւում է նիւթական աշխատանքի վրայ։ Ստորաբաժանումը հետևեալն է. երեք ժամ աշխատանք մինչև ճաշը, յետոյ ճաշ։ Ճաշից յետոյ երկու ժամ հանգիստ, ապա երեք ժամ աշխատանք, որից յետոյ ընթրում են։

Այսպիսով Թովմաս Մօրուսը իր գաղափարական պետութեան համար որոշել էր վեց ժամեայ բանուորական օր։ Հարիւր տարի անց՝ դօմինիկեան հռչակաւոր վանական Կամպանելլան Նէապոլի բանտում գրում է իր «Արեգակի պետութիւնը»։ Այդ օրինակելի պետութեան մէջ «հասարակական պաշտօնավարութիւնները, գեղարուեստները, արհեստները և այլ աշխատանքները՝ բոլոր մարդկանց մէջ բաժանուած են այն ձևով, որ իւրաքանչիւրին հաղիւ 4 ժամ աշխատանք է ընկնում»։

Եւ այսպէս ուրեմն, «Արեգակի պետութեան» մէջ գոյութիւն ունի չորսժամեայ բանուորական օր։

Մեր հակառակորդները հակաճառում են. մենք

այստեղ գործ ունենք ցնորքների հետ, որոնց ստեղծագործողները չեն էլ մտածել կեանքի մէջ մտցնել նրանց։

Այդ հակաճառութիւնը անհիմն է. եթէ նա հիմնաւոր էլ լինէր, այնուամենայնիւ, պէտք է կորցնէ իր նշանակութիւնը, ի նկատի ունենալով հետևեալ նըշանաւոր անձանց, ծանուցումներն, որոնք ութժամեայ բանուորական օրը համարում են կանոնաւոր կեանքի և սոցիալական քաղաքականութեան պահանջ։

Կոմէնիուսը, նորագոյն մանկավարժութեան հիմնադիրը, իր հռչակաւոր «ուսմունք դասաւանդութեան» (1632) գրքի մէջ կանոն է դնում, որ 8 ժամ պէտք է նուիրել՝ քնելու, 8 ժամ՝ ուտելու, հանգստութեան, մարմնի վրայ խնամք տանելու և հասարակութեան, 8 ժամ գործի։ Դա օրուայ բնական բաժանումն է։

Ֆրանսիացի հռչակաւոր Հելվէցիուսը (+ 1771) չափազանց մեծ հարստութեան կուտակման առաջն առնելու համար խորհուրդ է տալիս՝ թոյլ տալ միայն եօթ-ութժամեայ աշխատանք. իսկ պրուսական թագաւորի պալատական բժիշկ՝ ոչ պակաս համբաւաւոր Հիւֆէլանդը (+ 1836 թ.) Կանտի «Մտքի կորովի մասին» գրքին արած մէկ նկատողութեան մէջ ասում է հետևեալը. «Օրուայ ամենարնական բաժանումն այս է —8 ժամ նուիրել աշխատանքի, 8 ժամ հանգստութեան և 8 ժամ սննդի, մարմնամարզութեան, հասարակական գործերի և զուարճութեան»։ Հենրիխ Յաշոկէի «Ոսկի շինողների գիւղ» երկասիրութեան մէջ, ուր ամենքը աշխատում են մէկի համար և մէկը ամենքի համար, ամենաչքաւոր մարդկանց բանուորաժամը սահմանափակուած է ութ ժամով։

Ութժամեայ բանուորական օրուայ պահանջը, այսպէս ուրեմն, գոյութիւն ունի արդէն հարիւրաւոր տարիներ և նրա մարդարէները ամենքն էլ այնպիսի մարդիկ են, որոնք աստղերի պէս փայլում են քաղաքակրթութեան երկնակամարի վրայ։

Բանուոր ժողովուրդը պիտի պարծենայ նրանով, որ իրեն վիճակուել է մաքառելու այդպիսի նախնիքների թողած ժառանգութեան համար։

5. ՈՒԹԺԱՄԵԱՅ ԲԱՆՈՒՈՐԱԿԱՆ ՕՐԸ ՑՆՈՐՔ ՉԷ։

Ութժամեայ բանուորական օրը ցնորք չէ, այսինքը, նա այլևս երևակայութեան ծնունդ չէ, այլ գոյութիւն ունի, արիւն ու մարմին է դարձել, աճում ու ծաղկում է։ Անգլօ-աւստրալիական Վիկտորիա, Նոր Հարաւային Վալլիս և Նոր Զելանդիա պետութիւնների մէջ օրէնսդրական ձևով գոյութիւն ունի ութժամեայ բանուորական օր։

Վիկտորիայի պետութեան մէջ, ուր 1856 թ. առաջին անգամ ցոյց եղաւ յօգուտ ութժամեայ օրուայ, այդ օրը ազգային տօն յայտարարուեց։ Դա ապրիլի 21-ն է, որը տօնւում է արտակարգ հանդիսաւորութեամբ։

Սակայն մենակ հեռաւոր Աւստրալիան չէ, ուր օրէնքով մտցրուած է ութժամեայ բանուորական օրը. նա գոյութիւն ունի նաև մեզ աւելի մօտիկ Ամերիկայում։ Հիւսիսային-Ամերիկայի Միացեալ Նահանգներից շատերը մտցրել են այդ՝ ընդհանրապէս կամ արդիւնաբերութեան մի քանի գիւղերում, իսկ միացեալ պետութեան մէջ, ինչպէս նաև շատ առանձին նահանգներում, բոլոր բանուորները, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով պետական ծառայութեան մէջ են, վայելում են ութժամեայ բանուորական օրուայ բարիքները։ Պետութիւնը հարկադրում է իր բանուորներին ծառայել միայն ութ ժամ, և իր պատուէրները տալիս պահանջում է ձեռնարկողներից գործադրել միևնոյն բանուորաժամը։

Եւրոպայում, դժբախտաբար, դեռ ևս չը կայ մի

պետութիւն, որը մոցրած լինէր ութժամեայ բանուորական օր. սակայն ութժամեայ օրը այդտեղ էլ վաղուց գոյութիւն ունի և, մանաւանդ, զգալի յառաջադիմութիւն է արել համաշխարհային բանուորական տօնի հաստատումից ի վեր։ Անգլիայում՝ արդէն 1840 թուականին Շէֆֆիլի պողպատագործարանների բանուորները շաբաթը 48 ժամ էին աշխատում, իսկ վերջին տասն և երկու տարիների ընթացքում մի քառորդ միլլիոն անգլիական բանուորներ ստացել են ութժամեան բանուորական օր, իսկ միւս քառորդ միլլիոնն էլ ստացել է ինն ժամեայ կամ ինն ու կէս ժամեայ օր։ 1894 թ. ութժամեայ օր մոցրեց զինուորական նախարարութիւնը, 1895 թ. փոստային հաստատութիւնը, իսկ 1901 թ. ներքին պալատը ընդունեց հանքահանների աշխատանքը ութ ժամով սահմանափակելու առաջարկը։

Ֆրանսիայում՝ առևտրի սոցիալիստական նախարար Միլբրանը 1901 թ. ութժամեայ բանուորական օր մոցրեց փոստային, հեռագրական և հեռախօսային տեսչութիւնների արհեստանոցներում, ի հարկէ, առանց աշխատավարձը պակսեցնելու. ըստ որում, աշխատանքի արդիւնաւորութիւնը չը պակասեց։ Սակայն ութժամեայ բանուորական օրը մենք տեսնում ենք ոչ միայն որպէս օրէնքից ճանաչուած մի փաստ, մենք գտնում ենք նրան ոչ միայն պետական ձեռնարկութիւնների մէջ, այլև աւստրալիական, ամերիկական և անգլիական շատ քաղաքների ու ֆրանսիական, հոլանդական, դանիական, շվեդական և զուիցերական մի քանի քաղաքների քաղաքային ձեռնարկութիւնների մէջ՝ բոլոր բանուորների կամ առանձին խմբերի համար։

Մինչև անգամ Ռուսաստանումն էլ մի քանի ողջամիտ ու մարդասէր գործարանատէրերի ձեռքով մոցրուած է ութժամեայ բանուորական օր։

Եթէ մենք ներկայումս ութժամեայ մաքսիմալ բանուորական օրուայ պահանջ ենք առաջադրում, արդ այսպիսով, մենք ոչինչ նոր բան չենք պահանջում, այլ միայն արդէն եղածի ծաւալումն։ Ութժամեայ բանուորական օր, սակայն, մենք տեսնում ենք ոչ միայն արտասահմանում, այլև Գերմանիայում և Աւստրիայում։

Կրակով քաղաքը մոցրել է այդ իր գազային գործարաններում, իսկ գերմանական և աւստրիական մի քանի ձեռնարկողներ՝ իրենց գործարաններում։ Աւելին ևս։ Աստիճանաւորները, հոգևոր տեսչութեան պատկանող անձինք և ուսուցիչները աշխատում են օրական ութ ժամ կամ աւելի պակաս և բացի դրանից, ամբողջ շաբաթներով արձակուրդ են ստանում, սակայն նրանց աշխատավարձը ոչ միայն քիչ չէ, այլ մինչև իսկ աւելի շատ է բանուորի աշխատավարձից։

Եթէ ութ և վեցժամեայ բանուորական օրը այդ մարդկանց համար օրինաւոր բան է համարուում, ապա աշխատաւորների և աշխատաւորուհիների հարար այդ պէտք է համարել ոչ միայն արդարացի, այլև անհրաժեշտ, որովհետև, վերջիններիս աշխատանքը աւելի ծանր է և աւելի վատառողջ։

Ո՛չ մի սուրբ գիրք, ոչ մի բարոյական պատուիրան և ոչ մի սոցիալական ուսմունք պարտականութեան մասին՝ երբէք չէ յայտարարել, որ բանուորը աւելի քիչ իրաւունք ունի, քան աստիճանաւորը, ուսուցիչը և քահանան։

Ուստի, մենք պահանջում ենք՝ բանուոր ժողովրդին ուժասպառ անող և նրա կեանքը կարճող ամենօրեայ աշխատանքի համար ութժամեայ բանուորական ժամանակ։

Մենք արդարութիւն ենք ուզում, որովհետև նա միայն բարձրացնում է ժողովրդին։

6. ՈՒԹԺԱՄԵԱՅ ԲԱՆՈՒՈՐԱԿԱՆ ՕՐ ԵՒ ՃԳՆԱԺԱՄԵՐ։

Մենք պահանջում ենք ութժամեայ բանուորական օր՝ գերարտադրութիւնն ու ճգնաժամերը կրճատելու համար։

Մարդկային աշխատանքը, զանազան տեսակ մեքենաների գործադրութեան շնորհիւ, չափազանց արդիւնաշատ դարձաւ։ Մի ժամով այժմ սելֆակտօրի (ինքնաժան մեքենայ 800-ից մինչև 1000 ճախարակով) միջոցով՝ ամենալաւ մանողուհուց հազար անգամ շատ և աւելի լաւ թել կը ժանէ։ Արդիւնագործութեան միւս ճիւղերը ևս նոյն դրութեան մէջ են։ Այսպիսով, ահագին քանակութեամբ ապրանք է արտադրւում, լցւում են բոլոր խանութները, ստացւում է հսկայական գերարտադրութիւն, և, ժամանակ առ ժամանակ, վրայ է հասնում ընդհանուր գործազադար։

Հասարակութիւնը ֆնասւում է ապրանքների առատութիւնից. հետևանքը լինում է սնանկութիւն։

Մի ջին դասակարգի հազարաւոր մարդիկ կորցնում են իրենց հարստութիւնը և պրոլետարների դասն են ընկնում. հարիւրաւոր գործարաններ կանգ են առնում և հազարաւորներն էլ իսկոյն սահմանափակում են արդիւնագործութիւնը. հարիւր հազարաւոր բանուորներ փողոց են շպրտւում և հրում մուրացկանութեան և ոճրագործութեան գիրկը։

Բանուորաժամի կրճատումով միայն հնարաւոր է քիչ-շատ թուլացնել գերարտադրութիւնը և նրա կորստաբեր հետևանքները։ Աշխատանքի պաշտպանութեան օրէնքներով արդէն քայլ է արուած՝ կրճատելու բանուորաժամը, բայց դրան պիտի հետևեն յետագայ աւելի նշանակալից քայլեր, մինչև որ ձեռք կը բերուի ութժամեայ բանուորական օր։

Մենք պահանջում ենք բանուորական ութժամեայ

օր, որպէսզի հնարաւորութիւն ունենանք կանոնաւորելու արդիւնագործութեան ընթացքը, որը մերթ կատաղի առաջ է արշաւում, մերթ մէկէն ի մէկ կանգ առնում։ Մենք պահանջում ենք այդ որպէս քինաքինայ՝ հիւանդի համար, որը բռնուած է կապիտալիստական արտադրութեան ջերմախտով։ Տուէ՛ք մեզ այդ։

7. ՈՒԹԺԱՄԵԱՅ ԲԱՆՈՒՈՐԱԿԱՆ ՕՐ, ԱՆԳՈՐԾՈՒԹԻՒՆ, ԱՇԽԱՏԱՎԱՐՁ ԵՒ ԱՇԽԱՏԱՆՔ։

Մենք պահանջում ենք ութժամեայ բանուորական օր անգործութիւնը քշացնելու և ժողովրդի գնողական ոյժը աւելացնելու համար։

Բազմաթիւ մեքենաների գործածութիւնը առաջ է բերում անգործութիւն։ Հազարաւոր բանուորներ շարունակ անգործ նստած են և դրանով ազդում են գործողների աշխատավարձի վրայ։ Ինչպէս անգործները, նոյնպէս և վատ վարձատրւող բանուորները գնողական բաւարար ոյժի տէր չեն. մեր սեպհական ժողովուրդը չափազանց քիչ կարող է սպասել և մենք, այդպիսով, ստիպուած ենք մեր արտադրութիւնները առաջարկել ամերիկացիներին, հնդիկներին ու նեգրերին։ Եթէ պակասում է բանուորաժամը, ապա քշանում է նաև անգործների բանակը, որովհետև ապրանքների միևնոյն քանակութիւնը արտադրելու համար անհրաժեշտ է մարդկանց աւելի մեծ թիւ։

Որպիսի՞ հետևանք է ստացւում։

Գնողների բանակը մեծանում է, և նրանց սպառողական ընդունակութիւնը աւելանում է։ Մեծ քանակութիւն կարող է ծախուել իրեն երկրի մէջ ու փոքր մասը՝ արտահանուել։ Այդ վերաբերւում է բոլոր մթերքներին, գլխաւորապէս, գիւղատնտեսական արդիւնագործութեան մթերքներին։ Այսպիսով, իրենք գործարա-

նատէրերը և նամանաւանդ գիւղատնտեսները ոչպէս վաճառողներ, ութժամեայ բանուորական օր մացնելու մէջ շահ ունեն։

Իսկ որովհետև անգործների թիւը քչանում է, ուստի և բանուորական ոյժի գինը բարձրանում է, աշխատավարձը աւելանում է։

Շատ բանուորներ դեռ ևս հաւատում են հետևեալ դրութեան ճշմարտութեանը—երկար բանուորաժամ՝ բարձր աշխատավարձ. կարճ բանուորաժամ՝ ցածր աշխատավարձ։

Մինչդեռ ճիշտը՝ հակառակն է.—կարճ բանուորաժամ՝ բարձր աշխատավարձ. երկար բանուորաժամ՝ ցածր աշխատավարձ։

Գիտութիւնը և փորձը հաստատում են այս դրութիւնը։ Այն բոլոր երկրներում, ուր բանուորաժամը կարճ է, աշխատավարձը բարձր է. իսկ այն բոլոր երկրներում, ուր բանուորաժամը երկար է, աշխատավարձը ցածր է։

Աւստրալիայի բանուորները օրէնքով որոշուած՝ իրենց ութժամեայ բանուորական օրով՝ ամենաբարձր աշխատավարձն են ստանում և այդ պատճառով էլ կարողացան ամենակարճ միջոցում 200,000 ժարկի օգնութիւն ցոյց տալ Լօնդօնի նաւաշինարանների բանուորների գործադուլին։

Բարձր աշխատանքը մի բարիք է ամբողջ ժողովրդի ինտեսութեան համար և միևնոյն ժամանակ ինչպես չէ հասցնում գործարանատէրերին, որովհետև իւրաքանչիւր բանուոր միաժամանակ և ապրանք գնող է, ինչպէս իւրաքանչիւր գործարանատէր՝ ապրանք վաճառող է։

Միայն կարճատես եսականութիւնն է բարձր աշխատավարձի մէջ վտանգ տեսնում՝ սոցիալական տընտեսութեան համար։

Իսկ ութ ժամ գործող բանուորը ոչ միայն բարձր

աշխատավարձ է ստանում, այլ և ամենից շատ է արտադրում։

Այդ ինչպէս կարելի է։

Շատ պարզ։ Լաւ կերակրուող, բաւարար հանգիստ վայելող ժարդը ութ ժամուայ ընթացքում արտադրում է աւելի և լաւ, քան վատ սնուող, բեզարած մարդը՝ տասն և մէկ ու աւելի ժամերի ընթացքում։

Ութ ժամից աւել տևող բանուորական ժամանակի աշխատանքի տուած արդիւնքը հակառակ յարաբերական է բանուորական ժամանակին. 12 ժամուայ բանուորական օրուայ ընթացքում արտադրում է աւելի քիչ և վատ տեսակի ապրանք, քան այն, ինչ արտադրում է 11 ժամուայ ընթացքում, և այսպէս շարունակ մինչև ութժամեայ բանուորական օրը։

Եւ այսպէս ուրեմն, բանուորներ, որքան երկար է բանուորաժամը, այնքան աւելի վատթար է աշխատավարձը, այնքան քիչ և վատ է աշխատանքի հետևանքը։

8. ՈՒԹԺԱՄԵԱՅ ԲԱՆՈՒՈՐԱԿԱՆ ՕՐ, ԸՆՏԱՆԻՔ ԵՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ։

Մենք պահանջում ենք ութժամեայ բանուորական օր՝ ընտանեկան կեանքը վերականգնելու և բարձրացնելու համար։

Սոցիալ-դեմոկրատներին յանդիմանում էին, թէ նրանք կամենում են քայքայել ընտանիքը։ Այդ կասկածը միանգամայն անհեթեթ է։ Ընտանիքը նրանց ձեռքով չէ կարող քայքայուել հէնց այն հասարակ պատճառով, որ նա արդէն աւերուած է ինդուստրիալիզմի (խոշոր արդիւնագործութիւն) և կապիտալիզմի միջոցով։ Ընտանիքը այն ձևով, որպէս նա գոյութիւն ունէր հարիւր տարի սրանից առաջ, այլևս գոյութիւն

չունի, որովհետև արդիւնաբերութեան զարգացումը խորտակել է նրա տնտեսական հիմքերը։ Այն ժամանակները մենք դեռևս ոչ մի գործարան չունէինք, խոշոր արդիւնագործութիւն զրեթէ չը կար։ Ընտանիքը դեռևս միատեղ աշխատում էր արհեստաւորական կամ մանր արդիւնաբերական արդիւնագործութեան մէջ։ Ընտանիքը այն ժամանակ դեռևս գոյութիւն ունէր։

Իսկ այսօր,—հայրը աշխատում է մէկ գործարանում, մայրը՝ միւս, երեխաները՝ երրորդ գործարանում. կամ թէ ամենայարմար դէպքում, հայրը աշխատում է առաջին գործարանում, մայրը՝ երկրորդ, երեխաները՝ մինչոյն գործարանի երրորդ յարկում։ Ցաճախ պատահում է, որ կամ հայրը, կամ երեխաները, ոչ սակաւ անգամ և մայրը, գործարանից շատ հեռու են ապրում, այնպէս որ ծնողները և երեխաները ամբողջ օրերով և մինչև իսկ շաբաթներով կտրուած են միմիանցից։

Ընտանիքը մասերի է բաժանուած։

Միմիայն ութժամեայ բանուորական օրը կարող է նորից միացնել նրանց։

Աշխատող կանանց համար ութժամեայ բանուորական օրը գերագոյն բարիք կը լինէր։ Բանուորուհին սարուկ է ոչ միայն գործարանում, այլև տանը, և նրա դրութիւնը հին սարուկուհու դրութիւնից վատթար է։ Տանն և մէկ ժամեայ գործարանային աշխատանքից յետոյ, տանը նրան սպասում է երեք կամ հինգ ժամուայ աշխատանք ևս։ Զէ՞ որ նա պէտք է եփէ, լուանայ, մաքրէ ու կարկատէ։ Ժամանակի սղութեան պատճառով այդ ամենը կամ չէ կատարւում բոլորովին, կամ վատ է կատարւում, և դրանից կրկին խորապէս ՁՆասւում է ընտանեկան կեանքը։

Ընտանեկան կեանքը բարձրացնելու համար, մենք պահանջում ենք ութժամեայ բանուորական օր, մենք պահանջում ենք այդ՝ ամենից առաջ բանուորուհիների համար։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/II-1928
ԱՐԱՄԱՅԻՆ ԱՆՎԱՆ

Ութժամեայ բանուորական օրը, հօրը և մօրը մի երկու ժամով կը վերադարձնէ ընտանիքին։ Նրանք հնարաւորութիւն կունենան՝ նայելու իրենց սիրելիներին, իրենց երեխաներին և նրանց դաստիարակութեան գործին։ Ներկայումս շատ հազարաւոր երեխաներ զուրկ են ծնողական սիրուց ու խնամքից. նրանք ճակատագրի կամքին են թողնուած, նրանք փչանում են և հոգով ու մարմնով կորչում։

Օգնութեան հասէք, ընտանիքի և երեխաների բարեկամներ։

Ահա մի բարի գործ՝ յօգուտ ժողովրդի։

Խորհող ու մտքառող բանուորների հետ միասին պահանջեցէք ութժամեայ բանուորական օր, որովհետև նա կրկին ամրացնում է ընտանիքի կապերը և միջոց է տալիս աւելի լաւ դաստիարակել ապագայ սերունդը։

1005
11689

9. ՈՒԹԺԱՄԵԱՅ ԲԱՆՈՒՈՐԱԿԱՆ ՕՐ, ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ ՈՒ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ։

Ժողովրդական լուսաւորութիւնը՝ նրա ազատութիւնն է։

Տգիտութիւնը սարկութիւն է։

Գիտութիւնը՝ ոյժ։

Այդ դրութիւնները ցոյց են տալիս ժողովրդական լուսաւորութեան արժէքը։

Ժողովրդական կրթութեան գործը ինչու՞ այժմ այնքան վատ է գնում, չը նայած գիտութեան ու գեղարուեստի բոլոր յառաջադիմութեան։

Որովհետև ժողովուրդը հեծում է սարկական աշխատանքի ծանրութեան տակ և գիւղարուեստով ու գիտութեամբ զբաղուելու ոչ ժամանակ ունի, ոչ ոյժ, ոչ էլ միջոց։ Իսկ ժամանակ ունենալ, նշանակում է ունենալ նաև ոյժ ու միջոց։

Ո՞վ է կարդում ու հասկանում մեր կլասիկներին։ Յամենայն դէպս — ոչ ժողովուրդը։

Ո՞վ է զուարճանում գեղարուեստի արտադրութիւններով։ Ո՛չ ժողովուրդը։

Այստեղից է ծագում գեղարուեստի և գրականութեան ողբալի ամլութիւնը։ Նրանց երկուսին էլ պակասում է սնուցանող հողը։ Մենք ունենք ունևոր դասակարգերի գրականութիւն, բայց ժողովրդական գրականութիւն չունենք. մենք ունենք ձանձրանող հարուստների գրականութիւն, բայց մաքառող բանւոր ժողովրդի գրականութիւն չունենք. մենք ունենք նրբաճաշակ սեթևեթ գեղարուեստ, բայց առողջ գեղեցկութեան գեղարուեստ չունենք։

Գրականութիւնն ու գեղարուեստը աճում են հարուստների ջերմարաններում, այլ ոչ ճողովրդական, ազատ, ընդարձակ պարտիզում։

Ազատ ժամանակ տանք ժողովրդին, և նա կը զարդարէ իր կեանքը գիտութեամբ ու գեղարուեստով։ Գրականութիւնն ու գեղարուեստը նորից կը ծաղկեն։

Մենք ժողովրդի համար ազատ ժամանակ ենք պահանջում, կեանքի հոգեկան և գեղասիրական քաղցրութիւնները վայելելու համար։

Մենք, այնուհետև, ժողովրդի համար ազատ ժամանակ ենք պահանջում՝ բարոյական կատարելագործման նպատակով։

Միայն ազատ մարդը կարող է բարոյական լինել, անազատը — ոչ։

Իսկ մարդը ազատ է միայն այնչափ, որչափ նա ինքն իրեն է պատկանում։ Իրենց ժամանակի ամենալաւ մարդիկ՝ բարոյական կատարելագործման համար դէպի միայնութեան էին քաշւում, իրենք իրենց մէջ էին խորասուզւում։

Մենք չենք կարող և չենք կամենում ձգտել դէպի միայնութիւն, բայց մենք կամենում ենք ժամանակ

ունենալ, որպէսզի կենտրոնանանք մեր մէջ ոչ միայն կիւրակի օրը, այլ և ամեն օր։

Շահագործութեան սահմանափակում, շահի հետապնդման սահմանափակումն և գոյութեան կռուի կրճատում, — ահա բարոյականութիւնը բարձրացնելու հիմնական պայմանները։

Բանւորական օրը կրճատելով մինչև ութ ժամը՝ շահագործման առաջը կ'առնուի. շահի յետևից վազողին սահման ցոյց կը տրուի, և կը մեղմուի գոյութեան սարսափելի կռիւը։

Ութժամեայ բանւորական օրը իր մէջ պարունակում է ազնուացնող մեծ ոյժ և բարձր՝ կրօնական նշանակութիւն, նման կիւրակիին։

Ի՞նչ էլ որ լինի, մենք պահանջում ենք այդ։

10. ՈՒԹԺԱՄԵԱՅ ԲԱՆՒՈՐԱԿԱՆ ՕՐ ԵՒ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ։

Քաղաքակիրթ մարդկութիւնը ոչնչացրեց նախնի ստրկութիւնը, բայց ստեղծեց նոր՝ վարձկան ստրկութիւն, և այդ՝ մի տեսակէտով մինչև անգամ աւելի վատ է նախնի ստրկութիւնից։ Ստրուկը գործիք ու բեռնակիր կենդանի էր իր տիրոջ համար, և վերջինս նրա ֆիզիքական բարօրութեան մէջ շահ ունէր։ Ուրիշ բան է գործարանատէրը և աշխատանք տուողը։ Նրանք այդ շահը չունեն. բանւորը գործի անընդունակ է դառնում, — նա հեշտութեամբ նրան փոխարինում է ուրիշով։ Զէ՞ որ մի անպէտքացած բանւորի տեղ կարելի է տասնեակ թարմ բանւորներ գտնել։

Գործարանատէրերը, հետևապէս, ամենևին շահագրգռուած չեն ժողովրդի բարօրութեան խնդրով, բայց պետութիւնը — մարդկային հասարակութեան մի համերաշխ միութիւն — շահագրգռուած է։ Ժողովրդի բոլոր

անգամների առողջութիւնը շահ է ընդհանուրի համար իւրաքանչիւր առանձին անհատի հիւանդութիւնը՝ վնաս։ Համաճարակ հիւանդութիւնների ժամանակ եղակի հիւանդն անգամ վտանգաւոր է ընդհանուրի համար։

Այդ իսկ պատճառով վերջին 50 տարուայ ընթացքում ծաղկել է նոր բարերար գիտութիւնը—առողջապահութիւնը, մասնաւոր և հասարակական։ Նրա ձգտումները աւելի և աւելի ուղղւում են առ այն, որպէս զի նախօրօք իմաց տան ցաւն ու հիւանդութիւնը։

Բերանացի ու գրաւոր հրահանգներ են տարածւում առողջապահութեան մասին և թէ ինչպէս նախազգուշանան հիւանդութիւններից. դասախօսութիւններ են կարդացւում խելացի սննդառութեան մասին, կերակուրների ընտրութեան ու պատրաստման մասին, հիմնւում են հասարակական բաղնիքներ, հանգստութեան ու խաղերի տեղեր։

Պետութիւնը և համայնքը հսկում են տների, փողոցների, ջրերի և օդի մաքրութեան վրայ։ Օրէնսդրութիւնը և իշխանութիւնները հոգ են տանում, որ հագուստը և կերակուրը, ընակարանները և արհեստանոցները, գործարանները և երկաթուղային ճանապարհները վնասակար չը լինեն առողջութեան և չը ծնեն հիւանդութիւններ։

Ո՞ւրախի հսկայական յառաջադիմութիւն։

Բայց հասարակական բաղնիքներից ու այլ տեղերից ի՞նչ օգուտ բանուոր ժողովրդին, երբ նա այդ տեղերը յաճախելու ժամանակ չունի։

Ի՞նչը կարող է աւելի քայքայել առողջութիւնը և հիւանդութիւններ ծնել, քան չնչին աշխատավարձի հետ կապուած՝ չափազանց երկար բանուորական ժամանակը։

Առողջապահութիւնը հիմնւում է ընախօսութեան վրայ։ Իսկ ի՞նչ է ուսուցանում այդ գիտութիւնը կեանքի օրէնքների և երևոյթների մասին։

Ահա թէ ինչ. մարմնոյ թեան կանոնաւոր գործողութիւնները ամեն օր վեց ժամ են պահանջում. աշխատանքը չը պէտք է խանգարէ մարմնոյ թեան, որ մարդը առողջ մնայ։ Այսպիսով, պարտադիր աշխատանքի համար մնում է միայն ութ ժամ, եթէ չուզենք, որ մարդը բանուոր կենդանի դառնայ։

Իսկ ռամկավարական հիմարկութիւններ ունեցող ժամանակակից պետութեան՝ կենդանիներ պէտք չեն հարկաւոր են կրթուած, մտածող բաղաքացիներ։

Եւ եթէ պետութիւնը կամենում է ունենալ այդպիսի բաղաքացիներ,—իսկ նա պիտի ցանկանայ այդ իր բարօրութեան համար,—ապա նա օրէնքի մէջ պիտի մտցնէ ութժամեայ բանուորական օրը։

11. ՈՒԹԺԱՄԵԱՅ ԲԱՆՈՒՈՐԱԿԱՆ ՕՐ ԵՒ ԲԱՆՈՒՈՐՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ։

Գերմանական դեմոկրատիայի հին պարագլուխ Իոհան Եակոբին 1870 թ. իրեն ընտրողների առաջ արտասանեց հետևեալ նշանաւոր խօսքերը։

«Բանուորական ոի ամենաչնչին ընկերութեան հիմնումը՝ քաղաքակրթութեան ապագայ պատմագրի աչքում աւելի գին պիտի ունենայ, քան Սադովի ճակատամարտի օրը»։

Մեծ մտքի այդ հրաբորբոք խօսքերը արդեն ճշտուել են, որովհետև բանուորների հակառակորդներն անգամ խոստովանում են բանուորական կազմակերպութիւնների քաղաքակրթական գործի խոշոր նշանակութիւնը։ Եւ թէև վերջին քսան տարուայ ընթացքում այդ քաղաքակրթական աշխատանքը չափազանց լայնացել ու խորացել է, այնուամենայնիւ, ժողովրդական մեծ մասսաներ առայժմ անձեռնմուխ են մնացել այն պատճառով, որ բանուորական կազմակերպու-

թիւնը դեռ չէ հասել նրանց։ Երկար բանուորաժամն է ամենագլխաւոր արգելքը, որ բանուոր ժողովուրդը չէ կազմակերպւում ու հիմնում կրթական, համքարական (պրոֆէսիոնալ), կուսակցական համախմբումներ, սպառողական ընկերութիւններ և այլ տեսակ ընկերակցութիւններ։ Որպէս զի կազմակերպելու միջոցով՝ ժողովրդի կրթական և ազատագրական գործը մեծ յաջողութիւն ունենայ և խոշոր ու գերազանց պտուղներ տայ, անհրաժեշտ է թօթափել ժողովրդի ստրկական կապանքները—անհրաժեշտ է տալ նրան ութժամեայ բանուորական օր։

Մենք ապրում ենք մի պետութեան մէջ, ուր ժողովուրդը հասարակական բարօրութեան վերաբերեալ հարցեր քննելու ժամանակցութիւն է ձեռք բերել։ Մենք ունենք դեմօկրատական ձևի կառավարութիւն *)։

Բայց քաղաքացին՝ գիտակցաբար և արժանաւոր կերպով ինչպէս օգտուի իր իրաւունքներից, երբ նա ժամանակ չունի ուսումնասիրելու՝ օրէնսդրական և պետական ու հանրային տնտեսութեան հարցերը, երբ նրանց մասին պարզ աշխարհայեացք մշակելու անգամ ժամանակ չը կայ։

Ժողովուրդը իր իրաւունքներից հարկաւոր չափով օգտուելու բաւարար ժամանակ չունի։

12. ՈՒԹԺԱՄԵԱՅ ԲԱՆՈՒՈՐԱԿԱՆ ՕՐ, ՌԱՄԿԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅՐԵՆԻՔ։

Գործարանում տասն և մէկ ժամ կանգնող բանուորը, 11—12 ժամ չարչարուող արհեստաւորը, շաբաթում ու դաշտում 12—15 ժամ տանջւող՝ պարտքի տակ ընկած գիւղացին, - ամենքն էլ ոյժ չեն ունենում գործից յետո դեռ ևս գրքեր և այլ օրէնքներ կարդալ ու լաւ խորհել, կշռադատել կարդացածը։

Գալիս է ընտրութիւնների օրը. նրանք մնում են տանը, իսկ եթէ օգտւում են իրենց իրաւունքներից, այն էլ կուրօրէն հպատակուելով դիպուածին կամ ռուտինային։

Սրա մէջ է կայանում պետութեան համար վըտանգաւոր քաղաքական անտարբերութեան պատճառը։

Արիստոտէլի կարծիքով «ստրկութիւնը անհրաժեշտ է, որ ազատ քաղաքացիները կարողանան իրենց նուիրել պետական գործերին»։

Աշխատենք չը մոռանալ յունական իմաստունի այս խօսքերը։ Արդեօք դա չէ նշանակում, որ առանց ազատ ժամանակի ժողովրդի համար չը կայ ռամկավարութիւն, չը կայ ժողովրդական իշխանութիւն։

Յանուն ռամկավարութեան և նրա սուրբ գործի՝ ժողովրդի համար ազատ ժամանակ ենք պահանջում, մենք ութժամեայ բանուորական օր ենք պահանջում։

Վերջապէս, ութժամեայ օրը մենք պահանջում ենք բարձրացնելու համար ժողովրդական ոյժը, որը հայրենիքի յառաջադիմութեան և անկախութեան խակական գրաւականն է։

Մեր նախնիքների—նախնի զերմանացիների—հերոսական ոյժը գրուատում են։ Այո, բայց այդ հերոսական ոյժը չէ զարգացել խաւար հանքավիհերում ու հեղձուկ գործարաններում 11—12 ժամեայ աշխատանքի տակ։

Մեզ ժամանցոյց են անում յոյների վրայ, որպէս ֆիզիքական ոյժի և գեղեցկութեան տիպարի։ Ճիշտ է, սակայն, յոյները երբէք չէին աշխատում, նրանք գործը թողնում էին իրենց ստրուկներին, իսկ իրենք նուիր-

*) Հեղինակի խօսքը Գերմանիայի մասին է. մենք, գըժբախտաբար, նոյն իսկ այդ իրաւունքներից էլ զրկուած ենք։ Ծան. Թարգմ.

ւում էին մարմնամարզութեան: Այսպիսով, նրանք դարձան այն, ինչ որ էին:

Ինդուստրիալիզմը և կապատալիզմը մեծ վնաս հասցրին ժողովրդական ոյժին. այդ ցոյց է տալիս, ի միջի այլոց, զինուորակոչութիւնը: Բանւոր ժողովուրդը գործարանական աշխատանքի և վատ սննդառութեան պատճառով մանրացել է: Ամբողջ հազարներ անընդունակ են դուրս գալիս՝ հայրենիքի պաշտպաններ լինելու համար: Նրանց պակասում է ուղեղ՝ ոսկրներում, արիւն՝ սրտերում և օդ՝ կրծքերում:

Որպէսզի վտանգի ռոպէներին հայրենիքին չը պակսեն քաջ մարտնչողներ, մենք պարտաւոր ենք նորից կազդուրել ժողովրդի ոյժը՝ ութժամեայ բանւորական օրուայ միջոցով:

Ութժամեայ բանուորական օրուայ մեր պահանջը հայրենասիրական է, այդ խօսքի գերագոյն նշանակութեամբ: Ա՛յն ժողովուրդը, որը առաջինը կը կատարէ այդ պահանջը, ազգերի տնտեսական խաղաղ մրցման մէջ ամենաուժեղը կը հանդիսանայ, նա նոյնպէս ամենից ուժեղը կը լինի, երբ նրա առաջ դրուած կը լինի իր պատիւը, իր իրաւունքը, իր երկիրը և իր ազատութիւնը պաշտպանելու խնդիրը:

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI-1922
имени А. Мясникиана
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Дозволено Цензурою 28 Марта 1906 г. г. Тифлисъ.

ԹԻՖԼԻԶ
Էլեկտրաշարժ տպարան ,,ՀԵՐՄԵՍ" Ընկ. Մադաթ. փող., 15.
1906. (159)

ՀՀ Ազգային գրադարան
NL0199128

Լոյս տեսաւ «Կեանք»-ի Գրադարանից

1. ՎՈԴՈՎՈԶՈՎ.—Ընդհանուր ընտրողական իրաւունքը Արևմտքում. Թարգմ. Կ. Միքայէլեանցի. գինը՝ 10 կ.

[redacted].—[redacted].

3. ԶԷՅԴԷԼ.—Նորմալ բանուորական օր, թարգ. Մ. Եսայեանի. գինը՝ 5 կ.

Տպագրւում և շուտով լոյս կը տեսնէ

4. ԿԱՈՒՑԿԻ—Աւստրիայի ճգնաժամը (Լեզու և ազգ)։

Թարգմանուած և տպագրութեան համար պատրաստուում են.

1. ԿԱՈՒՑԿԻ.—Էրֆուրտի ծրագիրը։
2. Կ. ՄԱՐՔՍ և Ֆ. ԷՆԳԵԼՍ.—Կոմունիստական Մանիֆեստը։
3. ԳԵԴ.—Կոլլեկտիվիզմ։
4. ԼԻԲԿՆԵԽՏ.—Մեր նպատակները։
5. ՐԱԴԻՆ.—Պետական կազմը և քաղաքական կուսակցութիւնները։
6. Ն. ՏԵՕՄՆԻ,—Խուզարկութիւն։
7. Ի. ՇՏԷՐՆ.—Յաւելեալ արժէքի թեորիան։
8. ԲԷԲԷԼ—Քրիստոնէութիւն և սոցիալիզմ։